ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«10» նոյեմբերի 2023 թվականի N 116 -Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 56 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ՇԵՆՔԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ 78ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԻՆԳ ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 102-րդ հոդվածի, «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հավելվածի 2.5-րդ մասի,«Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1.Համայնքային սեփականություն հանդիսացող Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր բնակավայրի Կենտրոնական փողոց, թիվ 56 հասցեում գտնվող գյուղապետարանի շենքի առաջին հարկի 78քմ մակերեսով ոչ բնակելի տարածքը անհատույց օգտագործման իրավունքով հինգ տարի ժամկետով տրամադրել «Ժամանակակից արվեստի ինստիտուտ» հիմնադրամին՝ «Կոմիտաս. հողը և երգը» ծրագրի շրջանակներում Վարդաբլուր գյուղի խեցեգործական արվեստանոցի և համայնքային երգչախմբի գործունեությունը իրականացնելու նպատակով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ-	Կողմ (17)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)	Ծանոթություն
Վարդանյան Խաչիկ	—	—	—	—
Օհանյան Ռուսլան		—	—	—
Սարգսյան Աիդա		—	—	—
Նալբանդյան Նարեկ		—	—	—
Մուրադյան Դավիթ		—	—	—
Պառավյան Գոհար		—	—	—
Այվազյան Սերյոժա		—	—	—
Գրիգորյան Արսեն		—	—	—
Այվազյան Վրույր		—	—	—
Գևորգյան Համլետ	—	—	—	բացակա
Քալաշյան Վարսենիկ		—	—	—
Թորոսյան Հրայր		—	—	—
Տոնոյան Արփյոմ		—	—	—
Գրիգորյան Թամարա		—	—	—
Սարգսյան Ալիկ	—	—		բացակա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ /ՌՈՒՍԼԱՆ ՕՀԱՆՅԱՆ/